



Գլխուղեղի կեղևը կիսագնդերի արտաքին մակերևույթը պարուրող գորշ նյութի բարակ շերտ է: Այն կազմված է հալոսկ տեսակի բջիջներից, որոնք կոչվում են նեյրոններ: Նեյրոնների գործառնայթը տարբեր բջիջների միջև կապեր հաստատելն է: Այդ կապերի միջոցով էլեկտրական իմպուլսներ են ուղեղից հաղորդվում մարդու մարմնի տարբեր մասերին և ստիպում նրանց կծկվել կամ թալանալ, տարբեր շարժումներ կատարել: Գլխուղեղի կեղևում կան շուրջ 86 միլիարդ նեյրոն, որոնց մի մասը կապված են միմյանց իսկ մյուսները կարող են կապվել, եթե օրգանիզմը դրա կարիքն ունենա: Այսպես, օրինակ եթե մարդը անսովոր իրավիճակում է հայտնվում և երկար չարհարվելով վերջապես գլուխ է հանում իրավիճակից, ապա ուղեղի կեղևում սրեղծվում են նոր նեյրոնային կապեր, որոնք մտապահում են ձեռք բերված փորձը և ամեն անգամ ակտիվանում են, երբ կրկին նման իրավիճակ է սրեղծվում:

Հեղաքրքիր է, որ ուղեղը ցավ չի զգում, այն չունի ցավազգայուն ռեցեպտորներ: Երբ, օրինակ մարդու գլուխը ցավում է, ապա ցավում է ոչ թե ուղեղը, այլ նրան շրջապատող հյուսվածքները:

Մարդու ուղեղի զանգվածը 1200–1400 գրամ է: Ուղեղը մարդու սրտի նման երբեք չի հանգստանում: Այն արդյունավետ աշխատելու համար կարիք ունի մարզումների: Մարզման լավագույն ձև է մտավոր աշխատանքը: մտավոր գործունեությունը ակտիվացնում է ուղեղի աշխատանքը, ձևավորելով նոր նեյրոնային կապեր: